**Արձանագրության 4**
**« ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/11» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 30.01.2019թ.
Ժամը՝ 11:45

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Է. Շաքարյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Գևորգյան /գնահատող/, Վ. Գուլգուլյան /գնահատող/,
Բ. Տեր-Թովմասյան /բացող/, Ե. Մատասյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Կիրակոսյան

**1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին**

(Է. Շաքարյան)

1 Ընդունել ի գիտություն որ.

1.1 <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի/այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցների <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:*

**2« ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/11» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակիցների մասին**

(Է. Շաքարյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետով ընդունած որոշումը և <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ « ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/11» ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի

1-ին, 2-րդ, չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ ՍՊԸ -ն:

-3-րդ, 4-րդ, 6-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել Ջրտուք ՍՊԸ –ն:

-5-րդ չափաբ. մասով ընտրված մասնակից է ճանաչվել Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ ՍՊԸ –ն:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

**3 Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին**

(Է. Շաքարյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը **Ոռոգման ցանցերի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման** պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել վերը նշված մասնակիցներին:

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ տասը օրացուցային օր:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ------------------------------------------ Է. Շաքարյան

Անդամներ՝ ------------------------------------------ Վ. Գուլգուլյան

------------------------------------------ Ե. Մատայան

------------------------------------------ Լ. Գևորգյան

------------------------------------------ Բ. Տեր-Թովմասյան

Քարտուղար՝ ------------------------------------------ Ն. Կիրակոսյան